Այս է տապան Առուսի որդի. Ուա . . . :

Հրատ. Բարխուդարեանց, 243.

## 94. ԵՂԱԿԵՐ ԳՅՈՒՂ

**910. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *վրա, որը գտնվում է գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու մոտ.*

Այս է տապան Մխիթարի որդի Մեծլում ֆոխային. թվ. ։ՌՃՂԹ։ (1750)։

Հրատ. Բարխուդարեանց, 238։

## 85. ՆԵՐՔԻՆ ՇԵՆ

**911. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ** *խորանի հյուսիսային կամարի վրա.*

Եկեղեցիս անուանեցաւ Սուրբ Աստուածածին. թվ. ։ՌՃԽԶ։ (1697)։

Հրատ. Բարխուդարեանց, 245։ Լալաեան, V, 330։

**912. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ** *մուտքի բարավորի վրա.*

Աստուած ողորմի զօրեցի Գօրգինի որդի Տաւթին որ պատճառ եղև։ Կամաւն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ տէր Եղիային. յիշատակ իւր և ծնողացն, հօրն Աթին և մօրն Հաւումին և կողակցին և որդոցն տէր Գաւթին, Կոստանդին, Եսկարին . . . . տացութեամբ Շիրմազանի որդի Մելքումին . . ։

Ծանոթ. *Թերի* . . . տացութեամբ *բառը ըստ երևույթին* կացութեամբ *է եղել տեղում, որը կարելի է լրացնել* վերակացութեամբ։

Հրատ. Բարխուդարեանց, 245։

## 96. ԷՐՔԱՋ ԳՅՈՒՂ

**913. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ** *մկրտության ավազանի մոտ ագուցված մի գեղաքանդակ խաչքարի վրա.*

Թվ. ։ՉԹ։ (1260). Ես Ակոբ կանգնեցի զխաչս Սարգիսա և [կամ] ամեն ծնողաց մերոց. Աստուած ողորմի։

Հրատ. Բարխուդարեանց, 250։

**914. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ** *մուտքի բարավորի վրա, կիսաեղծ.*

. . . . մէ յիշատակ. թվն. ։ՌՃԿԵ։ (1716)։

Հրատ. Բարխուդարեանց, 250։ Լալաեան, V, 335։

**915. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ** *արևմտյան պատի մոտ, արտաքուստ, տապանաքարի վրա.*

Թվ. ։ՌՄԿԶ։ (1817), ա՛ է Պօլնուստ գալն, մայիսի ։Ի։ (20). Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ։

Հրատ. Բարխուդարեանց, 250—251։ Լալաեան, V, 335։

## 97. ՈՍԿԱՆԱՊԱՏ ԳՅՈՒՂ

**916. ԽԱՉՔԱՐ,** *ագուցված է գյուղամիջի ս. Հակոբ եկեղեցու արևմտյան պատի մեջ, արտաքուստ.*

Սուրբ խաչս աւգնական տէր Ովանէսին. թվ. ։ՈԴ։ (1155)։

Հրատ. Բարխուդարեանց, 273։